

Գործարար շահերի պաշտպանության ցանցի տեղեկատու

Իրադարձություններ/Նորություններ/Հայտարարություններ /Հոդվածներ/Օրենսդրական փոփոխություններ
ԻՐԱԳԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ **ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**



«Գործարար շահերի պաշտպանության ցանցի» հերթական ժողովը

Մարտի 15-ին Հայաստանի Առևտրա-արդյունաբերական պալատի նիստերի դահլիճում տեղի ունեցավ «Գործարար շահերի պաշտպանության ցանցի» հերթական ժողովը: Քննարկվեցին ՀՀ Կառավարության կողմից իրականացվող Տեսչական բարեփոխումների ընթացքը, տեղական հարկերի համակարգի, ինչպես նաև հարկային հաշվետվությունների կատարելագործման հարցեր:



«Կլոր-սեղան» քննարկում՝ նվիրված 2011թ. նախատեսված ՓՄՁ աջակցության պետական ծրագրերին

Մարտի 22-ին տեղի ունեցավ «ՓՄՁ Ջարգացման ազգային կենտրոնի» և «Գործարար շահերի պաշտպանության ցանցի» համատեղ կլոր-սեղան քննարկում: Քննարկման ընթացքում ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնը ներկայացրեց 2011թ. ՓՄՁ պետական աջակցության ծրագրերը, որից հետո սկսվեց հարց ու պատասխանի, քննարկումների սեսիան: Մա «ՕՆՀԱ»-ի գործարար շահերի պաշտպանության առնչվող վերջին «կլոր սեղան» քննարկումն էր ծրագրի շրջանակներում: Քննարկման ընթացքում ՓՄՁ ՋԱԿ-ի գործադիր տնօրենը հույս հայտնեց ստանալ «Գործարար շահերի պաշտպանության ցանցի» օժանդակությունը վերոնշյալ ծրագրերի արդյունավետ իրականացման գործում, ինչպես նաև ամրապնդել Յանցի հետ հետագա սերտ համագործակցությունը՝ ներգրավելու համար ՓՄՁ-երին այս ծրագրերի մեջ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի Հարկային և մաքսային վարչարարության կատարելագործման Հասարակական խորհրդի հերթական նիստը

Մարտի 23-ին տեղի ունեցավ նաև ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Հարկային և մաքսային վարչարարության կատարելագործման հասարակական խորհրդակցական մարմնի (Հասարակական խորհրդի) հերթական նիստը, որին մասնակցում էր նաև «Գործարար շահերի պաշտպանության ցանցի» ներկայացուցիչը: Նիստի ընթացքում ներկայացվել է Տեղեկանք՝ Հարկային և մաքսային բարեփոխումների շրջանակներում ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից վերջին վեց ամիսներին իրականացված միջոցառումների մասին:



«Գործարար շահերի պաշտպանության ցանցի» հերթական ժողովը

«Կլոր-սեղան» քննարկում նվիրված 2011թ. նախատեսված ՓՄՁ աջակցության պետական ծրագրերին

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի Հարկային և մաքսային վարչարարության կատարելագործման Հասարակական խորհրդի հերթական նիստը

Տեղեկանք Հարկային և մաքսային բարեփոխումների շրջանակներում ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից վերջին վեց ամիսներին իրականացրած միջոցառումների մասին

Կայացել է տեսչական բարեփոխումների համակարգման խորհրդի երկրորդ նիստը

IFC-ն աջակցում է Հայաստանին՝ առաջին րիգենսի գրանցման մեկ պատուհան հիմնելու գործընթացում

ՊԵԿ բոլոր ստուգող տեսուչներն ունենալու են ուղեցույցներ

Հայաստանի վարչապետ. Կան հինգ հանգամանքներ, որոնք խոչընդոտում են ազատ մրցակցությանը

Երեսանի քաղաքապետարանն ակնկալում է փոխշահավետ համագործակցություն գործարար ոլորտի ներկայացուցիչների հետ

Էդվարդ Նալբանդյանը ՄԱԿ-ի ներկայացուցիչի հետ քննարկել է Հայաստանում մրցակցության բարելավման խնդիրը

2011-ին ՊԵԿ-ի օրակարգի առաջին հարցը՝ սպասարկման որակի բարելավում

Երեսանում կկայանա արդի տեխնոլոգիաներին նվիրված «renewables – Made in Germany» ցուցահանդեսը

Վերլուծություն. Ինչի՞ց պետք է սկսել գնաճի դեմ պայքարը

Ո՞ր գներն է կարգավորելու պետությունը

Վալերի Ռազոզ. Հայաստանի թիվ մեկ խնդիրը սովետական տնտեսությունն է

Հայաստանի տնտեսական միջավայրն անկանխատեսելի է.

Կառավարությունը նախընտրում է գործարարներին ոչ թե բանտ ուղարկել, այլ փող վերցնել

Հարկային և մաքսային վարչարարության ոլորտում իրականացվող բարեփոխումները նպատակ ունեն մասնավորապես բարելավելու գործարար միջավայրը: Այդ ուղղությամբ վերջին 6 ամիսներին իրականացված բարեփոխումներից հարկ է առանձնացնել.

1.«Մեկ պատուհան» սկզբունքի ներդրումը հարկ վճարողների պետական գրանցման և հարկային մարմնում հաշվառման գործընթացում. Մ/թ ապրիլի 1-ից հարկ վճարողները ստանալու են ՀՎՀՀ-ները պետական ռեգիստրի գործակալությունում և ՀՀ կենտրոնական բանկում, բացառությամբ՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց, նոտարների, դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների, նրանց հավասարեցված միջազգային, միջկառավարական (միջպետական) կազմակերպությունների:

2. Հարկային հաշվետվությունների կրճատումը և օպտիմալացումը, Հարկ վճարողների հարկային մարմիններին դադարել են ներկայացնել ֆինանսական հաշվետվությունները (ձևեր 1 և 2), հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների եռամսյակային հաշվետվությունները, բնապահպանական և բնօգտագործման վճար վճարողների կողմից ներկայացվող տարեկան հաշվետվությունները, ճանապարհային վճարի մասով ելակետային տվյալների մասին ներկայացվող տեղեկությունները:

Մասնավել է հարկային մարմին ներկայացվող հաշվարկների և հաշվետվությունների համար միասնական վերջնաժամկետ՝ ամսվա 20-ը ներառյալ:

Այսուհետ հարկ վճարողները ներկայացնում են սոցիալական ապահովագրության վճարների հաշվետվությունները, ակցիզային հարկի հաշվարկը յուրաքանչյուր եռամսյակի համար, ավտոտեխնիկայի վճարում գործունեության սահմանային չափի մասին հայտարարությունը՝ յուրաքանչյուր եռամսյակի համար, ավտոտրանսպորտային գործունեության ելակետային տվյալների մասին հայտարարությունը՝ տարեկան 2 անգամ (հունիս և դեկտեմբեր ամիսներին)։

3.Հարկերի վճարման ժամկետի կրճատումը. Շահութահարկի կանխավճարները և նվազագույն շահութահարկը տարվա մեջ 12 անգամ վճարելու փոխարեն վճարում են եռամսյակային պարբերությամբ,

4.Արտոնագրային վճարների մասին նոր համակարգի ներդրումը, Առավել փոքր համարվող հարկ վճարողները հնարավորություն են ստացել ընտրելու արտոնագրային վճարով հարկման ռեժիմը և հարկային մարմիններին չներկայացնել որևէ հաշվետվություններ, եթե զբաղվում են սահմանված գործունեության տեսակներով, և որոնց գործունեությունից հասույթը չի գերազանցում 6 մլն դրամը:

5.Տարեկազբից սկզբունքորեն ներդրվել է ԱԱՀ-ի հարկային հաշիվների էլեկտրոնային եղանակով դուրս գրման նոր համակարգ: Հարկ է նշել, որ այն սուբյեկտները, որոնք աշխատում են այս համակարգով, ազատվում են առաքումների գրքերը վարելու պահանջից:

6.Բարեփոխումների հաջորդ խոշոր ուղղությունը կապված է հաշվետվությունները էլեկտրոնային եղանակով հարկային մարմին ներկայացնելու հետ:

Անցած տարվա ընթացքում այն 0-ից աճել է մինչև 4700 հարկ վճարողների տարեվերջին, ընդ որում՝ շուրջ 40 հարկային հաշվետվության ձևերից ներկայումս 27-ը հնարավոր է ներկայացնել էլեկտրոնային եղանակով: Փաստորեն՝ ՀՀ-ում այս ոլորտում լուրջ քայլ է կատարվել էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման ուղղությամբ:

7.Փոփոխվում է հարկային ստուգումների ռազմավարությունը, ներ է դրվում ռիսկերի հիման վրա ստուգումների նոր համակարգ: Վերանայվել են խոշոր հարկ վճարողների ընտրության չափանիշները և հաստատվել խոշոր հարկ վճարողների նոր ցանկը՝ թվով 440 հարկ վճարող:

Մասնավել է առանց ուսումնասիրության կամ ստուգման ԱԱՀ-ի և/կամ ակցիզային հարկի գումարների հաշվանցում կամ վերադարձ այն հարկ վճարողների համար, որոնք չեն համարվում ռիսկային՝ ՀՀ կառավարության կողմից սահմանված չափանիշներով:

Ներդրվում է ազդեցիկ հարկային պլանավորման ռիսկեր պարունակող ղեկավարի վերաբերյալ կենտրոնացված շտեմարան:

Շուտով ավարտվում է ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության ավտոմատացված համակարգի փորձարկումը:

8.ՊԵԿ-ը պարտադրված է վերափոխել հասարակության և գործարար միջավայրի կողմից հարկային և մաքսային մարմինների ընկալումը՝ հարկ հավաքագրող մարմին կերպարից վերածվելով հարկ վճարողներին սպասարկող, ժամանակակից ծառայություններ մատուցող մարմնի: Այդ նպատակով ՊԵԿ համակարգում գործարկվել են հարկ վճարողների սպասարկման կենտրոններ:

Ներկայումս Երևանում և Վանաձորում գործում են Հարկ վճարողների սպասարկման երեք կենտրոններ: 2011թ.-ին ՊԵԿ համակարգում նախատեսվում է գործարկել ևս երեք սպասարկման կենտրոններ, ինչպես նաև Հարկ վճարողների հեռախոսազանգերի սպասարկման կենտրոն: Այս կենտրոնները կոչված են նվազագույնի հասցնելու հարկ վճարողի շփումները հարկային տեսչությունների աշխատակիցների հետ:

9.Մաքսային վարչարարության պարզեցման նպատակով մշակվել և ներդրվել են գործարար միջավայրի բարելավման ուղղված մի շարք օրենսդրական բարեփոխումներ: Այդ թվում՝

Վերացվել է մաքսային մարմիններին համապատասխանության սերտիֆիկատը պարտադիր ներկայացնելու պահանջը: Ներդրվել է ապրանքների ծագման սերտիֆիկատների տրամադրման համար փաստաթղթերը էլեկտրոնային եղանակով ներկայացնելու համակարգ,

Մասնավել են հսկողության տակ գտնվող ապրանքների և ոչ նյութական արժեքների մասնագիտական փորձաքննության առավելագույն ժամկետը և արժեքը,

Ապահովվել է TWM համակարգի հետագա զարգացումը, Դուրսացվել են միջազգային փոստային և սուրհանդակային կապով առաքվող ապրանքների մաքսագերծման և մաքսային հսկողության ընթացակարգերը,

Պարզեցվել են գործարքային գնի հիման վրա մաքսային արժեքի որոշման ընթացակարգերը, Կրճատվել են երկակի նշանակության ապրանքների փորձաքննության համար անհրաժեշտ ժամանակը և վճարումները,

Ուժը կորցրած է ճանաչվել անասնակների ներմուծման և արտահանման ժամանակ սերտիֆիկատի ներկայացման ընթացակարգը, Ուժը կորցրած է ճանաչվել ներմուծման պահին մաքսային մարմիններին սերտիֆիկատի ներկայացման ընթացակարգը:

10.Նախաձեռնվել են միջոցառումներ՝ ուղղված ՊԵԿ-ի ներսում փաստաթղթաշրջանառության պարզեցմանը և անհարկի ձգձգումների խուսափմանը: Այսպես՝

Մ/թ-ի մարտի 21-ից ՊԵԿ վերադաս մարմինն ուղղված մաքսային ծառայության մասով դիմումները, հարցումները և այլ գրությունները կարող են ընդունվել նաև Երևան քաղաքից դուրս գտնվող հարկային և մաքսային ստորաբաժանումներում: Դրանց պատասխանները հասցատերերին նույնպես առաքվելու են տարածքային մարմինների միջոցով:

Տրվել են հստակ հանձնարարականներ՝ ԱՏԳ մասնակիցներից և ֆիզիկական անձանցից մաքսային վարչարարության այս կամ այն գործողությունն իրականացնելու համար անհարկի դիմումներ պահանջելու քաղաքական մասին,

Մաքսային մարմիններում ԱՏԳ մասնակիցների հաշվառման գործընթացը պարզեցնելու համար, նրանց վերաբերյալ տեղեկատվության գրանցումն այսուհետ իրականացվելու է հարկային հաշվառման կանգնելու համար հարկային մարմին ներկայացված տեղեկատվության հիման վրա:

11.Ներկայումս ՊԵԿ-ի կողմից նախաձեռնվել է մի շարք նորմատիվային և ընթացակարգային փոփոխությունների փաթեթ: Մասնավորապես, նախատեսվում է հարկային և մաքսային մարմինների կողմից հարկ վճարողներից տարբեր վարչարարական խնդիրներ լուծելու համար պահանջվող դիմումների ու տեղեկագրերի քանակը կրճատել ավելի քան 50-ով:

Այդ թվում՝

Մինչև յուրաքանչյուր տարվա հուլիսի 1-ը հարկային մարմինն իր պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակելու է օրենքով սահմանված կարգով և ժամկետում հայտարարագրեր ներկայացրած պաշտոնատար անձանց վերաբերյալ տեղեկատվությունը (նախագծի 1-ին կետի 1-ին ենթակետ), որը կարող է հասանելի լինել բոլոր պետական կառավարման մարմինների և անձանց համար, հետևաբար վերանում է յուրաքանչյուր հայտարարատուի կողմից տեղեկանքի ներկայացման անհրաժեշտությունը:

Այսուհետ հարկային տեսչության աշխատակիցն է լրացնելու ՀԴՄ-ի գրանցման կամ գրանցումից հանելու մասին հայտը:

Ուժը կորցրած ճանաչվելու լիցենզիա ստանալու համար լիցենզավորող մարմին հարկային տեսչության կողմից տրված ՀԴՄ-ի գրանցման և նախորդ տարի գործունեությունը կատարված լինելու մասին տեղեկանքի տրամադրման պահանջը: Տեղեկանքի փոխարեն կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը ներկայացնելու է ՀԴՄ-ի գրանցման քարտի պատճենը:

Հարկային գործակալը, առանց հարկային մարմնին դիմելու, ոչ ռեզիդենտի ռեզիդենտության տեղեկանքի հիման վրա իրականացնելու է հարկերի պահումը՝ կրկնակի հարկման համաձայնագրերի դրույթներին համապատասխան:

Առաքումների և հատույթների գրքերը հարկային մարմնին կնքման և համարակալման ներկայացնելիս հարկ վճարողի փոխարեն համապատասխան հայտը լրացվելու է հարկային մարմնի աշխատակցի կողմից:

Վերանալու է դիմում ներկայացնելու պահանջը՝ գործունեությունը ժամանակավորապես դադարեցնող անհատ ձեռնարկատիրոջ կողմից պետական գրանցման (հաշվառման) վկայականը (S)ՀՏ հանձնելու դեպքում:

Հանվելու է դրամարկղային գրքերը կնքելու համար հարկային տեսչություն դիմում ներկայացնելու պահանջը,

Ուժը կորցրնելու է հումքի դիմաց վճարված ակցիզային հարկի պակասեցման համար հիմք ընդունվող հաշվարկային փաստաթղթերի հատկացման և հաշվառման կարգը, քանի որ ակցիզային հարկի գծով ձեռք բերված հումքի դիմաց հաշվանցումները կատարվելու են ԱԱՀ-ի հարկային հաշիվների հիման վրա,

Հարկ վճարողի կողմից բանկային հաշիվ բացելու ժամանակ պահանջվող ստորագրությունների նմուշների քարտը վավերացվելու է բանկում նույն օրը և չի պահանջվելու դիմումների լրացում,

Հարկ վճարողի հաշվառման վկայականի կրկնօրինակը տրամադրվելու է՝ առանց գրավոր դիմում պահանջելու,

Հարկ վճարողի պարտավորությունների վերաբերյալ տեղեկանք ստանալու համար դիմումը լրացվելու է հարկային մարմնի աշխատակցի կողմից,

ՀՀ ռեզիդենտներն իրենց ռեզիդենտության փաստը հավաստիացնող տեղեկանքը ստանալու համար դիմելու են անմիջապես հաշվառման հարկային տեսչություն և տեղեկանքի տրաման ժամկետը կրճատվելու է մինչև 2 աշխատանքային օր,

Հայտարարագրի հիման վրա ինքնուրույն հարկ վճարած ՀՀ ոչ ռեզիդենտը իր վճարած հարկերի մասին տեղեկանքը ստանալու նպատակով դիմելու է Կենտրոնական գանձապետարանի հաշվառման հարկային տեսչություն:

ՊԵԿ-ի ներսում, ստորաբաժանումների միջև ավելորդ փաստաթղթաշրջանառությունը վերացնելու նպատակով՝ համապատասխան փոփոխություններ են կատարվել 17 գերատեսչական ակտերում:

Կայացել է տեսչական բարեփոխումների համակարգման խորհրդի երկրորդ նիստը

Կառավարությունում տեղի է ունեցել (04.03.11) տեսչական բարեփոխումների համակարգման խորհրդի երկրորդ նիստը, որը վարել է վարչապետ, խորհրդի նախագահ Տիգրան Մարգարյանը :

Նիստում, ըստ հաստատված օրակարգի, խորհրդի անդամները քննարկել են «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը: Վարչապետը հանձնարարել է մեկշաբաթյա ժամկետում նախագծի վերաբերյալ հնչած առաջարկություններն ու դիտողությունները ներկայացնել տեսչական բարեփոխումների աշխատանքային խմբին:

Օրակարգի երկրորդ հարցով հավանություն է տրվել ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչությունում ռիսկերի վրա հիմնված ստուգումների համակարգի մեթոդաբանությանը, որով հնարավորություն կտրվի վերանայել, վերլուծել ու դասակարգել վերահսկման օբյեկտները, ձևավորել տվյալների բազա՝ ըստ գործունեության ոլորտների և տնտեսվարող սուբյեկտների, ներդրել ստուգումների նպատակադրման առավել արդյունավետ մեխանիզմներ:

Ի թիվս օրակարգում ընդգրկված հարցերի, ներկայացվել է նաև Պետական հրդեհային տեսչությունում բարեփոխումների ընթացքի վերաբերյալ հաշվետվությունը: Մասնավորապես, զեկուցվել է 2010թ. հուլիս-2011թ. փետրվար ամիսներն ընդգրկող ժամանակաշրջանում տեսչական բարեփոխումների շրջանակում իրականացված գործողությունների և արդյունքների մասին:

IFC-ն աջակցում է Հայաստանին՝ առաջին բիզնեսի գրանցման մեկ պատուհան հիմնելու գործընթացում

Համաշխարհային բանկի խմբի անդամ Միջազգային ֆինանսական կորպորացիան աջակցել է Հայաստանի կառավարությանը առաջին բիզնեսի գրանցման մեկ պատուհան հիմնելու գործընթացում:

Երեսնում այսօր՝ մարտի 25-ին տեղի է ունեցել Կենտրոնի պաշտոնական բացումը, որին ներկա են եղել Կառավարության, գործարար ոլորտի և IFC-ի ներկայացուցիչները:

Կառավարությունը հայցել է IFC-ի աջակցությունը՝ բարելավելու իրավաբանական եւ անհատ ձեռներեցների համար գործարար միջավայրը, արդյունքում նվազեցնելով նոր բիզնեսի գրանցման ժամանակահատվածը մոտ երկու շաբաթով: IFC-ի «Հայաստանում գործարարությանը զբաղվելու բարեփոխումների եւ կանոնակարգման դաշտի պարզեցման ծրագիր»-ը Եվրոպայում եւ Կենտրոնական Ասիայում IFC-ի ռազմավարության մասն է կազմում, որն ուղղված է աջակցել կառավարություններին բարելավելու ներդրումային միջավայրը փոքր եւ միջին ձեռներեցության ոլորտում:

IFC-ի Հայաստանում գործարարությանը զբաղվելու բարեփոխումների եւ կանոնակարգման դաշտի պարզեցման ծրագիրը իրականացվում է Ավստրիայի ֆինանսների նախարարության, Նիդեռլանդների կառավարության, Լյուքսեմբուրգի ֆինանսների նախարարության, ինչպես նաև Կատարիայի առևտրային խթանման կոնսորցիումի հետ համատեղ:

Հայաստանը դարձել է IFC-ի անդամ եւ բաժնետեր 1995 թվականին: IFC-ն ներդրումներ է կատարում Հայաստանում՝ աջակցելով ֆինանսական շուկաների, ընդհանուր արտադրության, էներգետիկայի, հանքարդյունաբերության ոլորտներում: IFC-ի խորհրդատվական ծառայություններն իրականացվում են ծրագրերի միջոցով, որոնք ուղղված են ֆինանսական հատվածին, կայուն էներգետիկայի եւ ներդրումային միջավայրի կանոնակարգման դաշտի պարզեցմանը:

Պետական եկամուտների կոմիտեում այսօր տեղի է ունեցել Հարկային ստուգումների ուղեցույցների երկհատորյակի շնորհանդեսը: Ուղեցույցները, որոնք տպագրվել են ԱՄՆ ՄՋԳ-ի ֆինանսավորմամբ իրականացվող Հարկային վարչարարության բարեփոխումներին օժանդակող տեխնիկական աջակցության (ՀՎԲՕՏԱ) ծրագրի կողմից, մշակվել են ՀՎԲՕՏԱ-ի և ՊԵԿ-ի համատեղ ջանքերով՝ նպատակ ունենալով հեշտացնել Հայաստանի տնտեսության որոշակի ոլորտներում գործող հարկ վճարողների համալիր ստուգումների իրականացումը: Ուղեցույցները հատկապես կօգնեն ստանդարտացնել առանձին ոլորտներում իրականացվող հարկային ստուգումները՝ ապահովելով ՊԵԿ-ի տեսուչների բարձր որակավորման մակարդակ, ինչպես նաև ՊԵԿ-ի տեսուչների համար ռիսկային չափանիշների վրա հիմնված ստուգումների աշխատանքների կարգը, մեթոդները, եղանակները և ընթացակարգերը սահմանող տպագիր աշխատանքային նյութեր:

«Ստուգումների նոր ռազմավարությունը, հատկապես՝ ռիսկային չափորոշիչների հիման վրա ստուգումների իրականացումը, հարկային ոլորտի բարեփոխումների կարևոր ուղղություններից է: Մենք կարևորում ենք ինչպես այդ համակարգի ներդրումը, այնպես էլ, ըստ կոնկրետ ոլորտների, ռիսկերի և հարկային ռեգրվների բացահայտումը: Այս առումով, արդեն մեկ ու կես տարի է՝ ձեռնամուխ ենք եղել հարկային ստուգումների ոլորտում ուղեցույցների մշակմանը, որոնցից չորսը իրականացվել են ամֆիջապես ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ՝ փորձառու միջազգային փորձագետների մասնակցությամբ: Դրանք են՝ տրանսպորտի, գրոսաշրջության, անշարժ գույքի և ՀԳՄ-ների վերաբերյալ ուղեցույցները: ՊԵԿ մասնագետների ուժերով մշակվել են նաև մի շարք կարևոր ոլորտների ստուգման ուղեցույցներ, այդ թվում՝ շինարարության, կրթության, առողջապահության ոլորտներում», -նշել է ՀՀ ՊԵԿ նախագահ Գագիկ Խաչատրյանը: Համակարգի ղեկավարը կարևորել է ԱՄՆ ՄՋԳ-ի հետ համագործակցությունը, որի շրջանակներում իրականացվել է այսօրվա շնորհանդեսը: «Մենք որոշել ենք ՊԵԿ-ի և ԱՄՆ ՄՋԳ-ի համատեղ նախաձեռնությամբ տպագրված երկհատորյակով ապահովել մեր համակարգի բոլոր ստուգող տեսուչներին: Այն կտեղադրվի նաև ՊԵԿ պաշտոնական կայքում, որից կօգտվեն բոլոր ցանկացողները: Այս ձեռնարկները հնարավորություն կտան ոլորտային և այլ ստուգումների ժամանակ կիրառել նույնատիպ ստանդարտներ, օգտագործել վերլուծության միջազգայնորեն ընդունված գործիքներ, որոնք հնարավորություն կտան ավելի խորը վերլուծել հարկ վճարողի ֆինանսատնտեսական գործունեությունը: Կարծում են, ձեռնարկները կարող են օգտակար լինել ոչ միայն հարկային ծառայողների, այլև համապատասխան ոլորտի մասնագետների և ուսանողների համար: Մենք կշարունակենք այս ուղղությամբ աշխատանքները: Դրան են ուղղված նաև Համաշխարհային Բանկի հետ համատեղ երեք խոշոր ոլորտներում (հանրադրամարերություն, էներգետիկա և կապ) ստուգումների մասնագիտական և միջազգայնորեն ընդունված մեխանիզմների ներդրմանն ուղղված աշխատանքները»:

«ԱՄՆ ՄՋԳ/Հայաստան» առաքելության տնօրեն Ջաֆինդեր Չիման էլ նկատել է, որ այս ուղղությամբ ԱՄՆ ՄՋԳ-ի աջակցությունը հնարավորություն կտա հարկային մարմնին խուսափել ծրագրային նյութերի անհարկի կրկնությունից, նվազագույնի հասցնել աշխատանքային փաստաթղթերի կազմման համար պահանջվող ռեսուրսները և աշխատատարությունը: «Հավատացած ենք, որ այս բնագավառում ռիսկային չափանիշների վրա հիմնված մոտեցման ներդրումը և ստուգումների ընթացակարգերի ստանդարտացումը կնպաստեն Հայաստանի հարկ վճարողների շրջանում վստահության ամրապնդմանը և դրական ազդեցություն կունենան հարկային եկամուտների վրա»:

22.03.2011
Taxservice.am

Հայաստանի վարչապետ, Կան հինգ հանգամանքներ, որոնք խոչընդոտում են ազատ մրցակցությանը

Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսյանը նշել է ազատ մրցակցությանը խոչընդոտող հինգ հանգամանքները: Հայաստանի տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովի հիմնադրման 10-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովում նա ասել է. «Անցումային տնտեսությամբ երկրներում ազատ մրցակցությունը զգալի նշանակություն ունի: Այսօր Հայաստանում կան մի քանի օբյեկտիվ հանգամանքներ, որոնք խոչընդոտում են ազատ մրցակցությանը:

Դրանք են՝ հարկային եւ մաքսային վարչարարության, ձեռնարկությունների թափանցիկ աշխատանքի, կոռուպցիայի մակարդակի, երկրում առկա բացասական երեւոյթների նկատմամբ հասարակական վերաբերմունքի, տարածաշրջանային աշխարհաքաղաքական իրավիճակի խնդիրները»:

Տիգրան Սարգսյանը նշել է, որ կառավարությունը հարկային եւ մաքսային վարչարարությունը բարեփոխելու ծրագիր ունի: Բացի այդ, կառավարությունը կարևոր օրենք է ընդունել, որը մոտ 500 խոշոր ձեռնարկությունների ստիպում է հրապարակել ֆինանսական հաշվետվությունները:

21.03.2011
News.am

Երեսանի քաղաքապետարանն ակնկալում է փոխաշահավետ համագործակցություն գործարար ոլորտի ներկայացուցիչների հետ

Հնարավոր գործարար համագործակցությանն առնչվող հարցեր են քննարկվել Երեսանի քաղաքապետ Կարեն Կարապետյանի եւ ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի դեսպան Չարլզ Լոնդեյլի ու Բրիտանական «Կենտրոնական Ասիայի եւ Հարավային Կովկասի գործարար հետաքրքրությունների խմբի» տնօրեն Նիգել Պետերսի հետ հանդիպման ժամանակ:

Քաղաքապետարանի մամուլի ծառայությունից NEWS.am-ին հայտնում են, որ Նիգել Պետերսը քաղաքապետին ներկայացրել է «Կենտրոնական Ասիայի եւ Հարավային Կովկասի գործարար հետաքրքրությունների խմբի» գործունեության աշխարհագրությունը եւ ուղղությունները, նշելով, որ խումբը բրիտանական կառավարական շրջանակներին է ներկայացնում Կենտրոնական Ասիայի եւ Հարավային Կովկասի երկրներում ներդրումային դաշտի վերլուծական գնահատականն ու հնարավորությունները:

Ներկայացնելով մայրաքաղաքի արդյունավետ կառավարման առաջնահերթությունները, քաղաքապետն առանձնացրել է այն հիմնական ոլորտները, ուր քաղաքապետարանն ակնկալում է գործարար, փոխաշահավետ համագործակցություն գործարար ոլորտի ներկայացուցիչների հետ: «Բիզնես տրամաբանություն ունեցող ոլորտների կառավարումը մասնավոր ընկերություններին տրամադրել ոչ միայն կարագացնի ոլորտի զարգացումն ու կբարձրացնի արդյունավետությունը, այլև հնարավորություն կընձեռի բյուջետային խնայված միջոցներն ուղղել սոցիալական, բնապահպանական, կրթական եւ այլ ոլորտներ», -ընդգծել է Կարեն Կարապետյանը: Այս համատեքստում, նա նշել է մի շարք ոլորտներում՝ առողջապահական, կրթական եւ այլն, համատեղ կառավարման մոդելի կիրառման հնարավորությունը: «Մենք բաց ենք փոխաշահվետ,

կառուցողական ցանկացած առաջարկություն քննարկելու առումով եւ պատրաստ ենք համապատասխան բիզնես միջավայր ապահովել», – շեշտել է քաղաքապետը:

21.03.2011
News.am

Էդվարդ Նալբանդյանը ՄԱԿ-ի ներկայացուցչի հետ քննարկել է Հայաստանում մրցակցության բարելավման խնդիրը

Հայաստանի մրցակցային քաղաքականության բարելավմանն ուղղված հարցեր են քննարկվել այսօր՝ մարտի 21-ին Հայաստանի ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի եւ ՄԱԿ-ի Առեւտրի եւ զարգացման համաժողովի (UNCTAD) գլխավոր քարտուղար ղոկտոր Սուպաչայ Պանիտչակդիի հանդիպման ժամանակ:

ԱԳՆ մամուլի ծառայությունից NEWS.am-ին հայտնում են, որ Է. Նալբանդյանը գոհունակություն է հայտնել ՄԱԿ-ի Առեւտրի եւ զարգացման համաժողովի քարտուղարության կողմից Հայաստանի մրցակցային քաղաքականության ոլորտում տարվող աշխատանքներին ցուցաբերած աջակցության կապակցությամբ:

ՄԱԿ-ի Առեւտրի եւ զարգացման համաժողովի գլխավոր քարտուղարը բարձր է գնահատել Հայաստանի հետ հաստատված համագործակցությունը, եւ նշել, որ Հայաստանում հաջողությամբ են ընթանում տնտեսական բնագավառի բարեփոխումները:

Հյուրի խնդրանքով, Էդվարդ Նալբանդյանը ներկայացրել է Հայաստանի արտաքին տնտեսական կապերն ու դրանց խթանմանն ուղղված իշխանությունների քայլերը:

Սուպաչայ Պանիտչակդին ՀՀ ԱԳ նախարարին է ներկայացրել համաշխարհային Ֆինանսատնտեսական ճգնաժամի հաղթահարման իր տեսլականը:

Նշենք, որ ՄԱԿ-ի Առեւտրի եւ զարգացման համաժողովը հիմնվել է 1964թ. որպես մշտական միջկառավարական մարմին: Այն ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի՝ առեւտրի ներդրումների եւ զարգացման հարցերով զբաղվող հիմնական մարմինն է: Միջկառավարական համաժողովները գումարվում են 4 տարին մեկ անգամ: Տասներեքերորդ համաժողովը կգումարվի Կատարի մայրաքաղաք Դոհայում՝ 2012թ.:

21.03.2011
News.am

2011-ին ՊԵԿ-ի օրակարգի առաջին հարցը՝ սպասարկման որակի բարելավում

Հարկ վճարողների սպասարկման որակի կատարելագործումը պետական եկամուտների կոմիտեի 2011-ի գերակա խնդիրներից է հայտարարվել: Կոմիտեն որդեգրել է հետևյալ քաղաքականությունը՝ մեր երկրում եւս հարկ վճարողները պետք է սպասարկվեն միջազգային չափանիշներին համապատասխան. սա նաև երկրի նախագահի հանձնարարականն է: Մինչև այս տարեվերջ թե՛ աշխատանքի որակի, և թե՛ կառուցվածքային փոփոխությունների առումով Երևանի գրեթե բոլոր հարկային տեսչությունները հարկատուներին կներկայանան նոր տեսքով՝ կատարելագործված պայմաններով ու սպասարկման բարձր մակարդակով: Այդ գործում կարևորվում է յուրաքանչյուր հարկային ծառայողի դերը. հարկային մարմնի յուրաքանչյուր աշխատակցի հանձնարարվել է՝ գերծ մնալ անհարկի քաջշունչներից, ավելորդ թղթաբանությունից ու հատուկ ուշադրություն դարձնել հարկ վճարողների հետ առօրյա շփումներում սպասարկման բաժնի աշխատակիցների կողմից դրսևորվող կեցվածքին, պահել անհրաժեշտ, հարկ վճարողների իրազեկման գործընթացներին: Այժմ աշխատանքներ են տարվում բոլոր հարկային տեսչություններում սպասարկման սրահներ ստեղծելու ուղղությամբ, ավելին, նախատեսվում է նաև հանրապետության մարզերում հարկ վճարողների սպասարկման նոր կենտրոններ գործարկել, քանի որ դրանց միջոցով պետք է իրականացվեն հարկատուների հետ տարվող աշխատանքների մոտ 90 տոկոսը:

Սպասարկման որակի ուղղությամբ բոլոր այս առաջնահերթ պահանջներն արդեն իսկ ներդրվել և կիրառվում են Կենտրոնի հարկային տեսչությունում գործող սպասարկման նոր հարմարավետ սրահում, որի աշխատանքային չափանիշներն օրինակելի են լինելու մյուս բոլոր տեսչությունների սպասարկման սրահների համար: Կոմիտեն խնդիրը դրել է հետևյալ կերպ՝ բոլոր սպասարկման սրահներն ունենալու են շենքային ժամանակակից պայմանների և սպասարկման բարձր մակարդակի նույն չափանիշները: Կենտրոնի, այժմ նաև՝ Մյասնիկյանի, խոշոր հարկ վճարողների, իսկ շուտով նաև՝ Արաբկիրի հարկային տեսչություններում հարկային մարմիններն ապահովված են առօրյա աշխատանքի համար անհրաժեշտ բոլոր ժամանակակից պայմաններով: Արդեն գործում է նաև տարածաշրջանային սպասարկման սրահ Վանաձորում: Տեսչությունների՝ սպասարկման համար պատասխանատու աշխատակիցներն ապահովվել են բարձր աշխատավարձով, սակայն առաջադրված չափանիշներից փոքր-ինչ շեղվելու կամ հարկատուի մոտ դժգոհություն առաջանալու դեպքում խիստ պատժամիջոցներն անխուսափելի կլինեն: Կոմիտեի ղեկավարությունը հետևողական է լինելու սպասարկումը մշտապես բարձր մակարդակում պահելու ուղղությամբ:

Կենտրոնի հարկային տեսչության տեղեկատվության և վերլուծության բաժնի պետ Գոհար Արաբաջյանը Կենտրոնի և Մյասնիկյանի ՀՏ-ների սպասարկման սրահներ այցելած լրագրողներին տեղեկացրել է, որ բարձրակարգ սպասարկման որդեգրած ուղեմիջոց չշեղվելու, այդ թվում հերթերն ու կուտակումները բացառելու նպատակով՝ սպասարկման սրահի աշխատակիցներն ընդունում են բիզնեսի կողմից ներկայացվող բոլոր հաշվետվությունները, հետո արդեն՝ իրականացվող վերլուծությունների արդյունքում, ամփոփվում են ներկայացված տվյալներն ու դրանց արժանահավատությունը: Ըստ այդմ, ելնելով ներկայացված տվյալներից, հասցեական մոտեցում է ցուցաբերվում բիզնեսի ներկայացուցիչների նկատմամբ. «Ի դեպ, եթե նախկինում՝ 2-3 տարի առաջ, տեսչություններում հերթերը սովորական երևույթ էին, և անգամ հատուկ հանձնաժողովներ էին գործում այդ հերթերը կանոնակարգելու նպատակով, ապա այժմ հարկատուներն այլևս ստիպված չեն մի սենյակից մյուսն անցնել՝ ավելորդ ժամանակ ու միջոցներ վատնելով: Ծառայությունները մատուցվում են այնպես, որպեսզի հարկատու սպասարկվի մեկ պատուհանի սկզբունքով և իրեն հուզող բոլոր անհրաժեշտ հարցերի պատասխանը արագ և օպերատիվ կերպով ստանա սպասարկման մեկ սրահում», – ասել է Գ. Արաբաջյանը: Սպասարկման մեկ պատուհանի սկզբունքից է օգտվում նաև հարկատու Արթուր Փանոսյանը, ով լրագրողներին հետ գրույցում նշել է, որ անհամեմատելի են նախկին և ներկա՝ բարեփոխված տեսչությունների աշխատանքները՝ սկսած շենքային պայմաններից. «Նախ հերթեր ընդհանրապես չկան, ժամանակից սպասարկում է իրականացվում, և զգալի է առանձնահատուկ ուշադրությունը հարկատուի նկատմամբ»:

Տեսչության այլ ստորաբաժանումներ հարկատուները կարող են այցելել միայն ծայրահեղ անհրաժեշտության պարագայում, օրինակ, ստուգման հետ կապված հարցեր առաջանալիս: Այդ դեպքում էլ հարկատուի մուտքը հարկային տեսչություն տեղի ղեկավարության խիստ վերահսկողության ներքո է:

Արվում է առավելագույնը՝ մաս հարկ վճարող-հարկային տեսուչ շփումները նվազագույնի հասցնելու համար: Այս հարցում կարևոր դերակատարում ունի «Հարկատու 3» էլեկտրոնային համակարգի կայացումը, այսինքն՝ հարկային փաստաթղթաշրջանառությունն էլեկտրոնային դարձնելու խնդիրը՝ այդ թվում հարկային հաշիվների մասով: Ինտենսիվ աշխատանքներ են տարվում, որպեսզի հարկատուն որքան հնարավոր է արագ անցում կատարի էլեկտրոնային եղանակին և հրաժարվի «թղթից»: Այդպիսով զգալիորեն կկրճատվեն թղթային տարբերակով ներկայացվող տեղեկությունների կազմման համար ծախսվող ժամանակը և հարկային մարմնի հետ շփումները: Հարկատուներն արդեն նկատում են կատարված փոփոխությունները. Հարկատու Գայանե Շամիրյանը, օրինակ, թվարկում է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության առավելությունները: Կոնկրետ իր համար հաշվետվություններն էլեկտրոնային տարբերակով ուղարկելը պարզապես անգնահատելի է ժամանակի առումով: Ի դեպ, գործարար միջավայրի բարելավման շրջանակներում մաս հարկային մարմին ներկայացվող փաստաթղթերի կրճատման քաղաքականություն է վարվում: Արդեն իսկ կրճատված 5 հաշվետվություններին շուտով կհետևի ներկայում գործող օրենսդրության շրջանակներում հարկային մարմինների կողմից հարկ վճարողից պահանջվող փաստաթղթերի դիմումների քանակի էական կրճատում. օրերս դրանց թիվը կկրճատվի շուրջ 13-ով:

Այս տեսչություններում, ինչպես և մյուս տարածքային հարկային մարմիններում, հարկ վճարողները կարող են օգտվել հատուկ տեղեկատվական տերմինալներից, որոնք տեղադրվել են հարկ վճարողների սպասարկման ծառայությունների ընդլայնման և օպերատիվության ապահովման նպատակով: Յուրաքանչյուր հարկային տեսչությունում տեղադրված է երկուական տերմինալ: Ներդրված այս և այլ նոր տեխնոլոգիաների կիրառման հնտություններին տեղյակ լինելու համար տեսչությունների աշխատակիցները պարբերաբար վերապատրաստվում են՝ մաս բիզնեսին բոլոր անհրաժեշտ հարցերում օգնելու համար, քանի որ երբեմն գործարարները դժվարությամբ են ընդառաջ գնում բարեփոխումներին և արդյունքում կիրառվող նոր տեխնոլոգիական մոտեցումներին: Այսպիսով՝ սպասարկման մակարդակի կատարելագործմամբ կոմիտեն փորձում է հարկատուների հետ շփումը տեղափոխել բոլորովին նոր հարթություն: Այդ ուղղությամբ իրականացվող բարեփոխումները շարունակական բնույթ են կրելու, առավել ևս, որ դրանք նպաստելու են մաս հավաքագրումների արդյունավետության բարձրացմանը:

18.03.2011
Taxservice.am

Երեւանում կկայանա արդի տեխնոլոգիաներին նվիրված «renewables – Made in Germany» ցուցահանդեսը

Գերմանիայի դեսպանությունն առաջին անգամ Հայաստանում ներկայացնելու է արդի տեխնոլոգիաներին նվիրված «renewables – Made in Germany» ցուցահանդեսը, որի բացումը տեղի կունենա մարտի 21-ին՝ ժամը 11-ին, 2004թ. սկսած՝ այս ցուցադրությունը ներկայացվել է ավելի քան 90 երկրների 260 միջոցառումներում:

Գերմանիայի էներգետիկ գործակալության (Deutsche Energie-Agentur /dena/) մշակած այս ցուցադրությունն իր 26 ցուցադրվահանակների միջոցով պատկերացում է տալիս վերականգնվող էներգիայի եւ նրանց այլընտրանքային հնարավորությունների մասին:

Ցուցադրանմուշները մասնավորապես կպատմեն քամու էներգիայի, բիոէներգիայի, արեւային էներգիայի եւ հիդրոէլեկտրակայանների մասին: Գերմանիան վերականգնվող էներգակիրների կիրառմամբ առաջատար է աշխարհում:

Նշենք, որ ցուցադրությունը կազմակերպվում է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի (Պոլիտեխնիկ) հետ համագործակցությամբ:

18.03.2011
News.am

Վերյուծություն. Ինչի՞ց պետք է սկսել գնաճի դեմ պայքարը

Օրեցօր վերահսկողությունից դուրս եկող գնաճի ֆոնին հարց է առաջանում, թե ի՞նչ է անում իշխանությունն այդ ուղղությամբ: Իշխանությունը, խոստովանենք, ինչ-որ բան անում է: Օրինակ՝ կառավարությունը ներկայացրել է գների վարչական մեթոդներով կարգավորման օրենսդրական նախաձեռնություն, որն իր անկատարության պատճառով առաջացրել է նույնիսկ նվիրյալ իշխանամետների զարմանքը:

Սակայն, որքանով արդարացված են կառավարության նման նախաձեռնությունները. Մեր օրենսդրության համաձայն՝ գնաճի միակ պատասխանատուն Կենտրոնական բանկն է: Չկա որեւէ պետական ծրագիր, որեւէ իրավական փաստաթուղթ, որտեղ կառավարությունը պարտավորություն ստանձներ գնաճը կարգավորելու:

Տարիներ առաջ Կենտրոնական բանկին արդեն զգուշացրել էինք, որ չի կարելի այնպիսի պարտավորություն ստանձնել, որ 100 տոկոսով ապահովել չես կարող: Այսինքն՝ չես կարող միայն մոնետար լծակներով գնաճ վերահսկել, իսկ ԿԲ-ն այլ լծակներ չունի: ԿԲ-ի չինովիկները, հիմնվելով հիմնականում Արժույթի Միջազգային Հիմնադրամի հանձնարարականների վրա, բոլորիս վստահեցրին, որ կկիրառեն գնաճի կարգավորման ամենաժամանակակից լծակները, ու խնդիր չենք ունենա:

Հիմա համարյա ամեն մի ասուլիսի ժամանակ ԿԲ-ի ներկայացուցիչները խոսում են այն մասին, որ միայնակ չեն կարող պայքարել գնաճի դեմ: Բայց, եթե դա այդպես է՝ ուրեմն պետք է փոխել օրենսդրությունը, սկսած՝ Սահմանադրությունից: Պետք չէ ուրեմն ամեն տարի պետական բյուջեի մասին օրենքով հանձնարարականներ տալ ԿԲ-ին, որ մա միեւնույն է՝ չի կատարելու:

Այլապես՝ անհասկանալի իրավիճակ է ստեղծվել: Էկոնոմիկայի նախարարությանն են հանձնարարել գնաճի կարգավորման օրինագիծ մշակել, ու նրանք էլ ներկայացրել են ռուսական օրենսդրությունից պատճենահանված ինչ-որ փաստաթուղթ: Իսկ ուրիշ ի՞նչ էինք ուզում՝ Էկոնոմիկայի նախարարությունը երբեք չի զբաղվել գնաճի խնդիրներով, ու չգիտի էլ, թե ինչպես պետք է զբաղվել: Նրանք ընդամենը հանձնարարությունը կատարելու իմիտացիա են ստեղծել՝ քաջ գիտակցելով, որ դա իրենց խնդիրը չէ: Նույնիսկ չեն ցանկացել հասկանալ, որ այն, ինչ հնարավոր է Ռուսաստանում, անիմաստ է կրկնել Հայաստանում: Ռուսաստանն ունի համեմատաբար փակ շուկա, նրանց պարենային ինքնաբավության աստիճանը շատ մեծ է, ներմուծումներից առանձնապես մեծ կախվածություն չունեն: Այդ պատճառով Ռուսաստանի կառավարությունը կարող է ներքին ռեսուրսների հաշվին գների կայունություն ապահովել՝ խստացնելով միայն վարչարարությունը: Հայաստանն իրեն նման շքեղություն թույլ տալ չի կարող: Ենթադրենք՝ այդուր միջազգային շուկայում 30 տոկոսով թանկանում է: Այստեղ կամ պետք է թանկացնեն նույնպես 30 տոկոսով, կամ ընդհանրապես չներմուծեն՝ այլ տարբերակ չկա:

Գների կարգավորման այս շիջվածքը, կրկնում ենք, գալիս է մեր օրենսդրությունից: Կամ այն պետք է արմատապես վերանայվի, կամ պետք է ԿԲ-ի չինովնիկները պատասխանատվության ենթարկվեն օրենքի ու Սահմանադրության պահանջները չկատարելու համար: Որովհետև քանի դեռ մենք մեր օրենքները հարգել չենք սովորել, որեւէ արդյունավետ պետական քաղաքականություն չենք կարող իրականացնել:

Սամվել Ավագյան

17.03.2011
News.am

Ո՞ր գներն է կարգավորելու պետությունը

Թերթը գրում է, որ չկարողանալով եղած միջոցներով կանխել գների անկանոն բարձրացումը, կառավարությունը մտադիր է դա անել արհեստական միջամտությունների միջոցով:

Ըստ այդմ, առաջարկվում է Ազգային ժողովին փոփոխություններ կատարել «Առևտրի եւ ծառայությունների մասին» օրենքում: Օրենսդրական նախաձեռնության իմաստն այն է, որ մեկ ամսվա ընթացքում որոշ առաջին անհրաժեշտության ապրանքների գների 30 տոկոսից ավել բարձրանալու դեպքում գործընթացին միջամտում է կառավարությունը՝ սահմանելով տրամաբանական համարվող գներ:

Առաջին հայացքից թվում է, թե այս նախաձեռնությունը կարող է լուրջ լծակ լինել գների բարձրացումը կանխելու համար: Սակայն իրականում այդպես չէ:

Որքան էլ տարբեր երկրներում գործում է պետության կողմից գների միջանկյալ կարգավորման նորմը, այնուհանդերձ այն հազիվ թե կարելի է արդյունավետ մեխանիզմ համարել: Առավել ես, երբ խոսքը մեկ ամսվա ընթացքում գների 30 տոկոսից ավել բարձրացման մասին է: Նման դրսևորումներ ապրանքային շուկաներում սովորաբար շատ հազվադեպ են տեղի ունենում:

Օրինակ, տարեսկզբին Հայաստանում 12-ամսյա գնաճը հասավ 12,4 տոկոսի: Սա գնաճի չափազանց բարձր մակարդակ է, հատկապես Հայաստանի դեպքում, որտեղ, մի կողմից, տարիներ շարունակ գնաճը եղել է անհամեմատ ցածր, մյուս կողմից՝ բնակչության սոցիալական վիճակը, մեղմ ասած, այնքան էլ բարվոք չէ: Սակայն անգամ այդ պայմաններում կան շատ սակավաթիվ ապրանքներ, որոնց գները մեկ ամսվա ընթացքում թանկացել են 30 տոկոսից ավելի:

Ըստ վիճձառայության դիտարկումների, ընդամենը մեկ պարենային ապրանքի գծով է տեղի ունեցել 30 տոկոսից ավել գնաճը: Խոսքը՝ գազարի մասին է, որը փետրվարին նախորդ ամսվա համեմատ թանկացել է 30,09 տոկոսով:

Մյուս բոլոր դեպքերում գնաճը ցածր է եղել դրանից: Ասենք՝ կարտոֆիլը, որը ընդգրկված է կարգավորման ենթակա ապրանքների ցանկում, թանկացել է 16 տոկոսով: Շաքարավազի գնաճը մեկ ամսվա ընթացքում եղել է ընդամենը 3,1 տոկոս: Յորեն, բրինձ, հնդկաձավար, այլուր, որոնք ես ընդգրկված են կարգավորման ենթակա ապրանքների ցանկում, թանկացել են 3,5-6 տոկոսով: Կենդանական եւ բուսական յուղերի գները բարձրացել են ընդամենը 1,1 տոկոսով: Նույն պատկերն է նաեւ մյուս ապրանքների դեպքում:

Ստացվում է, որ, ասենք, փետրվարի բարձր գնաճի պայմաններում այս նախաձեռնության շրջանակներում կառավարությունը պետք է կարգավորի ընդամենը մեկ ապրանքատեսակի՝ գազարի գինը, որի ազդեցությունը պարենային զամբյուղի վրա բնականաբար էական չէ: Մյուս բոլոր դեպքերում առաջարկվող օրենսդրական նախաձեռնությունը որեւէ իրավասություն չի տալիս:

Այնուհայտ է, որ այս ճանապարհով գնաճի դեմ պայքարելը արդյունավետ չէ: Որքան էլ թանկացումները շատ հաճախ արհեստական բնույթ ունեն, այնուհանդերձ դրանք չեն տեղավորվում այն չափանիշերի մեջ, որոնք առաջարկում է կառավարությունը: Միշտ էլ կարելի է ձեռնարկ մեկ ամսվա ընթացքում 30 տոկոսից ավել գների բարձրացում թույլ չտալու համար: Փոխարենը՝ առաջարկվող մեխանիզմի կիրառման դեպքում կարող են ի հայտ գալ բազմաթիվ լուրջ խնդիրներ, գրում է «Հայոց աշխարհը»:

12.03.2011
armworld.am

Վալերի Ռազլոզ. Հայաստանի թիվ մեկ խնդիրը սովետային տնտեսությունն է

Հայաստանի թիվ մեկ խնդիրը սովետային տնտեսությունն է: Այսօր՝ մարտի 11-ին նման հայտարարություն արեց Վերակառուցման եւ Չարգացման Եվրոպական բանկի (ՎԶԵԲ) երեսնյան գրասենյակի տնօրեն Վալերիո Ռազլոզը:

Այդ եզրակացության ՎԶԵԲ-ը հանգել է 350 հայ գործարարների շրջանում անցկացված հարցումների հիման վրա: Հայ գործարարները, որպես երկրորդ խոչընդոտ, նշել են քաղաքական անկայունությունը, իսկ հարկային եւ մաքսային վարչարարությունը միայն երրորդ տեղում է:

Վ. Ռազլոզի եզրակացմամբ՝ Հայաստանի առջեւ ծառայած հիմնական խնդիրը վատ բիզնես-միջավայրն է: Բացի այդ՝ Հայաստանի տնտեսությունն ունի դիվերսիֆիկացիայի պակաս: Վ. Ռազլոզը նաեւ հիշեցրեց, որ Հայաստանի արդյունաբերությունը հիմնականում միտված է բավարարելու տեղական շուկան, իսկ արտահանումները շատ փոքր ծավալ են կազմում:

11.03.2011
news.am

Հայաստանի տնտեսական միջավայրն անկանխատեսելի է

Արտասահմանցի ներդրողների համար դժվար է կանխատեսել ապագայի ծախսերը: Սա Մերիլենդի համալսարանի պրոֆեսոր Մարի Անն Սփիլմանի կարծիքն է, որը նա հնչեցրեց այսօր՝ «Ալլընտրանք» հետազոտական կենտրոնի կազմակերպած քննարկման ընթացքում:

Ըստ Սփիլմանի՝ չկարողանալով պլանավորել ծախսերը՝ ներդրողները Հայաստանը չեն դիտարկում որպես «ապագայի ինվեստիցիոն միջավայր»:

Պրոֆեսորը տեղեկացրեց, որ իրենց համալսարանը մի քանի ծրագիր է փորձել իրականացնել Հայաստանում, սակայն մշտապես հանդիպել է նույն խնդիրներին՝ անկանխատեսելիություն եւ անկայունություն: Ըստ Սփիլմանի՝ այս խոչընդոտներն այնքան գորեղ են, որ նույնիսկ

Մփյուռքը չի կարողանում Հայաստանում ներդրումներ կատարել: «Մփյուռքը նույնպես հնարավորություն է փնտրում ներդրումներ կատարելու համար, սակայն նույնպես բախվում է բիզնես միջավայրի այս մթնոլորտի հետ: Մա գալիս է համակարգի ոչ լավ կառավարումից»,- եզրակացրեց Մ. Սփիլմանը:

11.03.2011
news.am

Կառավարությունը նախընտրում է գործարարներին ոչ թե բանտ ուղարկել, այլ փող վերցնել

Այն գործարարները, որոնք մեկից ավելի անգամներ 2 մլն դրամից ավելի խախտում են թույլ տվել, կազատվեն քրեական պատասխանատվությունից, եթե ամբողջությամբ հատուցեն պետությանը հասցված վնասները (ներառյալ տույժ-տուգանքները): Կառավարությունն այսօր՝ մարտի 10-ին հաստատեց այն օրենսդրական նախաձեռնությունը, որով պետք է փոփոխություններ կատարվեն քրեական օրենսգրքում:

«Փաստորեն սա էական մեղմացում է, եւ բիզնես միջավայրում մեծ ազդեցություն պետք է լինի, քանի որ շեշտը դրվում է ոչ թե քրեական, այլ նյութական պատասխանատվության վրա»,- կառավարության նիստի ընթացքում հայտարարեց վարչապետ Տիգրան Սարգսյանը:

Սակայն նշենք, որ ՀՀ կառավարությանն առընթեր պետեկամուտների կոմիտեի ներկայացրած եզրակացությունում սույն փոփոխության ազդեցությունը գնահատվել է ոչ էական: Պատճառն այն է, որ սույն որոշումը ներդրումների եւ տնտեսական աճի վրա ազդեցություն չի թողնի, ինչպես նաեւ չի ազդի «Doing business»-ի վարկանշի վրա:

Փոխարենը ֆինանսների նախարարության տեղեկանքում նշվել է, որ կալանավորների թվի նվազման հետեւանքով կնվազեն պետական ծախսերը, իսկ վնասները հատուցելու հետեւանքով՝ կավելանան բյուջետային մուտքերը:

10.03. 2011թ.
news.am



AFIC

Օտարերկրյա Ներդրումների եւ Համագերծակցության
Անցիացիա



Մասնավոր Չեռներեցության Միջազգային Կենտրոն
(ԱՄՆ)